

յամի Տեառն ՌՈՆԵին եւ ի թվին Հայոց ՌԾԴին
 դրեաց առ փառն Պօղոս Ե. զդաւանութիւն
 կաթողիկէի հաւատոյ, ստորագրութեամբ
 իւրով եւ այլոց վեցից եպիսկոպոսաց. որոյ
 զօրինակն ունիմ ի գրատան իմում» (Տաշեան,
 Յուցակ Մխիթ. Մատենադարանի, էջ 111) :

Հաւանօրէն տարբեր է ասկէ այն թուղթը
 զոր գրեց Դաւիթ կաթողիկոս 1607, Մայիս
 13ին առ նոյն Քահանայապետ : Այս թուղթը
 հասած է մեզի թարգմանութեամբ⁵ : Դաւիթ
 կաթողիկոս յայտնելով միւսանդամ իւր են-
 թարկումը Հոռմի քահանայապետական գեր-
 իշխանութեան կը խնդրէ, որ հաճի Քահա-
 նայապետն Պօղոս Ե. գրել թուղթ մը առ Շահ
 Աբաս. «որ նա շնորհէ իրենց՝ իրենց հին կրօ-
 նական ազատութիւնն եւ եկեղեցական եւ աշ-
 խարհական ինքնավարութիւնը» . ուստի մի
 եւ նոյն խնդիրը, զոր 1603ին ներկայացուցած
 էր Տեկանդէրին : Այս քայլը առնելու համար
 յորդորած էին զինքը Սպահանի Աւգոստի-
 նեանք : Կ'ըսուի թէ նոր Զուլայի իշխանները,
 երբ լսեցին թէ կաթողիկոսը նման բովանդա-
 կութեամբ թուղթ է գրած, շատ տժգոհեցան
 եւ Աւգոստինեանց հետ սկսուած բանակցու-
 թիւնները ի դերեւ հանեցին : Կան ըսողներ, թէ

⁵ P. Fr. Antoine de Gouea, Relation des Grandes Guerres et victoires obtenues par le roi de Perse de Châ-Abbas contre les empereurs de Turquie Mohamet et Ahmet son fils. Trad. de l'Original Portugais. Rouen 1646, էջ 412. Հմմտ. նաեւ Thomas a Jesu, Thesaurus divinae Sapientiae, lib. 7, cap. 19. եւ A. Johannissjan, անդ, 34.